



# ՍՈՒՐՔ ՅԱԿՈՒՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՑԻ

### Վարսագայ Սոուր Խաչ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(65.22-25)

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցում	Էջ 2

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԱՌԱԿՆԵՐՈՒ ԳԻՐՔԷՆ

(3.18-26)

**Ի** մաստուլթիւնը կեանքով կը վարձատրէ իրեն ապաւինողները եւ ապահովութիւն կու տայ անոնց՝ որոնք իրեն կը կռթնին՝ որպէս Տիրոջ: Իր իմաստուլթեամբ էր որ Աստուած երկրին հիմերը դրաւ, գիտութեամբ հաստատեց երկինքները: Իր հանճարով է որ երկրի ընդերքներէն ջուրերը կը ժայթքեն եւ ամպերը անձրեւ կը թափեն:

Որդեակ, իմաստուլթենէն մի՛ բաժնուիր բնաւ. խրատներու եւ խորհուրդներու

հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս, շնորհքներով զարգարուիս, մարմինդ առողջ մնայ եւ ոսկորներդ հանգստանան: Որպէսզի խաղաղ ըլլայ քու կեանքդ եւ ապահով ընթանաս, առանց երբեք գայթելուցերեկը անվախ նստիս եւ

գիշերը քաղցր նինջով քնանաս: Ուստի մի՛ վախնար գալիք փորձանքներէն, ո՛չ ալ ամբարիշտներու յարձակումներէն. որովհետեւ ամենուրեք Տէրը հետդ պիտի ըլլայ եւ պիտի պաշտպանէ քեզ որոգայթներէն:

... խրատներու եւ խորհուրդներու հետեւէ՛, որպէսզի կեանք ունենաս...

**Ա**յսպէս կ'ըսէ Տէրը.- «Կեանքի ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը: Այլեւս զուր տեղ պիտի չ'աշխատին ու դժբախտ զաւակներ պիտի չծնին, որովհետեւ Աստուծոմէ օրհնուած սերունդ մը պիտի ըլլան, թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց զաւակները: Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ գիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. «Ի՞նչ կ'ուզէք»: Այն ատեն գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եզան պէս յարդ պիտի ուտէ եւ օճը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չդպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լերանս վրայ», կ'ըսէ Տէրը:

... իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԷՆ  
(6.14-18)

**Գ**ալով ինծի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն գատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարեւորը մարդուս

Թշվառուած կամ անթշվառ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբույժ թող գիտ չենդէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վէրքերուն սպիւնները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**

(24.30-36)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի

բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի ղրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թղենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդին գալուստը մօտ է: Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»:




**ՍՈՒՐԲ ՅԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**  
**ԳՈՀԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ**  
**THANKSGIVING LUNCHEON**  
 Կազմակերպութեամբ՝ Հոգաբարձութեան  
**Կիրակի, 7 Հոկտեմբեր, 2018**  
 Ժամը 13:00-ին  
 Հայ Կեդրոնէն ներս  
 Մուտքի նուէր՝ \$25  
 10 տարեկանէն վար երեխաներու համար՝ \$15  
 Տոմսերու համար հեռաձայնէլ  
 Վարդան Բաբայանին 438 863 0272  
 Դիանատուն 514 331 5445 x202